Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառաության հետևալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Տարոնիկ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար / ծածկագիր 1.2-1/ Աշխատակազմի քարտուղարը համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է ՏԻՄ ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, լուծում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ: Իրականացնում է սույն անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-Բարձրագույն կրթություն, համայնքային ծառաության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող պետական ծառաության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառաության ստաժ և համայնքային ծառաության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառաության ստաժ և համայնքային ծառաության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող պետական ծառաության դասային աստիճան / կոչում / կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայացողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2018 թվականի հունվարի 1- ը համայնքային ծառայության պետական և /կամ/ համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

–Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի ,,բ,, ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

-Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2016թվականի հունիսի 16-ին 12-00-ին Տարոնիկի համայնքապետարանի շենքում:

Մրցույթին դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ներկայացնում են

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացնող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթեր՝
- Դիպլոմ և վկայականի պատճեներ,/բնօրինակների հետ միասին /
- Արական սեռի անձինք նաև զին գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցցագրման վկայականի պատճեն բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,
- Մեկ լուսանկար 3 x 4 սմ. չափսի
- Եվ անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթ փաստաթղթերը հանձնում են անձամբ ամեն օր 10-00-ից մինչև 18-00 բացի շաբաթ և կիրակի օրերից Տարոնիկի համայնքապետարան հեռ. 093.20.67.88 կամ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցե Ք. Արմավիր Աբովյան 71հեռ. 0237.2.76.49, 2.07.70/

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները ներկայացվող փաստաթղթերի ցանկին և այլ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնների անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Տարոնիկի համայնքապետարանի աշխատակազմ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ գյուղ Տարոնիկ Շիրակի փողոց 2 հեռ. 093.20.67.88

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2016 թվականի մայիսի 23-ը :